ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 3

12.07.2022թ. կնքված N «ՏԿԵՆ-ՄԱԾՁԲ-2022/11Հ» հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք. Երևան

« 22 » « 03 » 2023թ.

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Ա. Երիցյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Դ. Քարտաշյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, միասին այսուհետև՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 16-ի N 211-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Կողմերի միջև **12.07.2022թ. կնքված N «ՏԿԵՆ-ՄԱԾՁԲ-2022/11Հ»** պետական գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 կետը և հաշվի առնելով այն, որ Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման համար նախատեսվել են ֆինանսական միջոցներ, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Կողմերը որոշեցին.

1.1 Սահմանել, որ Հ-36, /Մ-4/ (Իջևան) - Նավուր - Բերդ - Այգեպար հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ 5+600-կմ 42+100 հատվածի հիմնանորոգման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայությունները մատուցվելու են 2023թ.-ին՝ շինարարական աշխատանքների կատարմանը զուգընթաց:

1.2 Հաստատել 2023 թվականի վճարման ժամանակացույցը՝ համաձայն հավելված 1-ի:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը կնքվում է հայերեն լեզվով երկու օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	«Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,	ՀՀ, ք. Երևան, Աճառյան 54բ
ՀՀ կենտրոնական գանձապետարան	Ինեկոբանկ ՓԲԸ
ՀՀ 900011002632	ՀՀ 2050022451291001
ՀՎՀՀ 02815457	ՀՎՀՀ 00813453
գլխավոր քարտուղար	Տնօրեն
Ա. Երիցյան	Դ. Քարտաշյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հաստատված է
N «ՏԿԵՆ-ՄԱԾՁԲ-2022/11Հ» գնման պայմանագրի
«22» «03» 2023 թ. կնքված
թիվ 3 Համաձայնագրով
Հավելված թիվ 1

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

(ՀՀ դրամ)

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Գնման ենթակա ծառայությունների անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը տարի
1	98111140/	Հեղինակային հսկողության ծառայություններ	---	---	---	2 470 400	2 470 400	2 470 400	4 940 800	4 940 800	4 940 800	4 940 800	4 940 800	4 940 800	**4 940 800**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900011002632
ՀՎՀՀ 02815457
գլխավոր քարտուղար
Ա. Երիցյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Աճառյան 54բ
Ինեկոբանկ ՓԲԸ
ՀՀ 2050022451291001
ՀՎՀՀ 00813453
Տնօրեն
Դ. Քարտաշյան

/ստորագրություն/
Կ.Տ